№ 51 ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 6 — 1889 — ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 6 № 51

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

Կիրակի օր, մայիսի 7-ին, առաւօտեան 11 ժամին, Վանքի մայր եկեղեցում կը կատարվի հանդուցեալ ՊՐՕՖԷՍՕՐ ՔԷՐՈՎԲԷ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ քառասնամեայ հոգեհանդիստը, որի մասին հանդուցեալի քոյր Կատարինէ ու փեսայ Մուշեղ Քանդարեանցները յայտնում են ազգականներին և բարեկամներին։

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ բան է ուղղութիւնը մամուլի մէջ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գանձակից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տէրարի ճառը Փարիզի ցուցահանդէսի բացման առիթով. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պանսից շահը և նրա ճանապարհորդութիւնը.

ԻՆՉ ԲԱՆ Է ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ ՄԱՄՈՒԼԻ ՄԷՋ

Ծիծաղելի տպաւորութիւն է գործում մարդուս վրա, երբ մի յայտնի տեսակի մամուլը յանդգնում է արտասանել հետեւեալ ֆրազան. „մենք հետեւելու ենք միշտ մեր ուղղութեան“, կամ „մեր թերթը պատկերազարդ էլ դառնալով՝ մենք փոխելու չենք մեր ուղղութիւնը։“

Մարդը կարդալով այդ տեսակ տողերը՝ շուարված է մնում.... Չը գիտես արդեօք դա յանդգնութիւն է, թէ տգիտութիւն....

Արդեօք այդ տեսակ մարդիկ, հաւատացած լինելով որ ընթերցողների մեծամասնութիւնը հասկացողութիւն չունի ուղղութիւն ասած բանի վրա, օգտվում են ժողովրդի այդ կատարեալ տգիտութիւնից և թող են փչում նրա աչքերին, թէ իբրանք ոչինչ հասկացողութիւն չունեն ուղղութիւն ասած բանի վրա։

Այժմ բացատրենք ինչ բան է ուղղութիւնը։

Ուղղութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ հաստատ համոզմունքի, որոշ, անփոփոխ վարդապետութեան, մի անգամ ընդ միշտ կազմված թէօրիայի ներդաշնակութիւնը՝ գործնական հայեացքների հետ։ Ուղղութիւն ունեցող մամուլը պէտք է միշտ յարմարեցնէ իր ունեցած թէօրիան կենսական երևոյթներին, կեանքի մէջ պատահող, դիտած երևոյթներին։ Երբ լրագրիրը արդէն մի անգամ ունեցած, մի անգամ մշակած հայեացքը, համոզմունքը, թէօրիան, վարդապետութիւնը՝ գործադրում է ամեն պատահող երևոյթների դիտելուն և քննադատելուն,—այդ նշանակում է թէ այդ լրագիրը հաստատ ուղղութիւն ունի։

Ընդհակառակն, երբ որ լրագիրը այլ և այլ դիպուածներում՝ նոյնանման երևոյթների վրա նայում է զանազան հայեացքներից,—նշանակում է թէ մամուլի այդ օրգանը ոչինչ ուղղութիւն չունի։

Ուրիշ բան է՝ ունենալ համակրելի կամ հակակրելի ուղղութիւն.... Բայց հաստատ ուղղութիւն պէտք է լինի, այսինքն մտածողութեան, ուրեմն քննադատութեան այն որոշ, հաստատ չափը, որով լրագիրը, առանց ինքն իրան հակասելու, չափում, քննադատում է գործնական կեանքի երևոյթները, հասարակական ընթացիկ հարցերը։

Առաջադէմ, ազատամիտ ուղղութիւն ունեցող լրագիրը չէ կարող համակրել՝ յետադէմ, խաւարամիտ ուղղութիւն ունեցող լրագրին, բայց այնու ամենայնիւ նա պէտք յարգէ այդ լրագիրը, եթէ նրա այդ ուղղութիւնը անկեղծ է, որոշ է, հաստատ է, անշեղ է, անփոփոխ է, եթէ լրագիրը հաստատամտութեամբ մի և նոյն դատողութեան չափն ու կշիռը գործադրում է անշեղ կերպով ամեն հարցերին, ամեն հասարակական երևոյթներին։

Բայց այն մամուլը, որը թէօրիայում մի յայտնի հայեացքներ է յայտնում, իսկ կեանքի ընթացիկ հարցերը գործնականապէս քննադատելու ժամանակ՝ կատարեալապէս հակառակ մտքեր է արտայայտում,—այդ տեսակ մամուլը սրբապղծութիւն է գործում, խօսելով ուղղութեան մասին։

Բերենք օրինակներ մեր միտքը աւելի պարզաբանելու համար։

Տարիների ընթացքում լրագիրը այն միտքն էր յայտնում, որ հոգևորականութիւնը պէտք է յարգել, չը նայելով որ հոգևորականութեան մէջ այս կամ անձն էլ կարող է անարժան լինել և չը պէտք է դիպչել նոյն իսկ այդ տեսակ անձնաւորութիւններին, չը մերկացնել նրանց պակասութիւնները՝ ամբողջ դասակարգի յարգն ու պատիւը վայր չը գցելու համար։ Բայց հէնց որ յայտնվում է մի հոգևորական, որը անձնապէս համակրելի չէ խմբագրին, այդ խմբագիրը մոռանում է իր տարիներով յայտնած վարդապետութիւնը և սկսում է ամենաանվայել ծաղրածութեամբ վերաբերվել իր լրագրի էջերում դէպի հոգևորական կոչում կրողը.... Դա որ և է ուղղութեան կատարեալ բացակայութիւն է։

Ուրիշ օրինակ։ Մի լրագիր անդադար յայտնում է թէ եկեղեցու և դպրոցի գոյութեան հիմքը՝ ժողովրդական, ընտրողական սկզբունքն է։ Բայց հէնց որ դրպրոցի այս կամ այն հոգաբարձուների հետ նոյն լրագրի խմբագիրը դժգոհութիւն է ունենում, կամ դպրոցական գործում իր որ և է անձնական շահեր ունի,—նա անմիջապէս մոռանում է իր սկզբունքը, իր ուղղութիւնը և սկսում է քարոզել ընտրողական, ժողովրդական սկզբունքի, հոգաբարձութեան ոչնչացնելը։

Երրորդ օրինակ։ Մի լրագիր անդադար, տարիների ընթացքում, և նոյն իսկ այս րոպէիս գոռում գոչում է թէ իւրաքանչիւր հասարակական պաշտօնեայ պարտաւոր է հաշիւ տալ իրան յանձնված հասարակական գումարների մասին, թէ միմիայն կանոնաւոր և օրինաւոր հաշուեւութեան սկզբունքի վրա է հիմնված հասարակութեան ընկերական ամբողջ կազմակերպութիւնը, և այլն և այլն.... Ցանկարծ խմբագրի բարեկամներից մէկը, իր ձեռքումն ունենալով հասարակաց գումարներ, մերժում է ժողովրդին հաշիւ տալը այդ փողերի մասին.... Եւ ի՞նչ էք կարծում։ կարծում էք որ ուղղութիւն ունեցող խմբագիրը պէտք է պահանջի նրանից հաշիւներ, պէտք է դատապարտէ նրա արարքը.... Ամենևին ոչ։ Նոյն խմբագիրը միջից կէս է լինում ապացուցանելու համար որ մարդը շատ լաւ է անում որ ոչինչ հաշիւ չէ տալիս ժողովրդին....

Կարող ենք հազարաւոր այդ տեսակ օրինակներ բերել։

Եւ այդ տեսակ մարդիկ խօսում են ուղղութեան մասին, հաւատացնում են ժողովրդին թէ ունեն ուղղութիւն, և միամիտները հաւատում են թէ նրանք ճշմարիտ ուղղութիւն ունեն։

Այդ տեսակ մարդկանց բերանում՝ „մենք մեր ուղղութիւնը փոխելու չենք“ խօսքը,—կատարեալ սրբապղծութիւն է։

Իսկ հասարակութիւնը մեզանում դեռ ևս այն աստիճան անզարգացած է մասաւորապէս, որ չէ դրոշմում այդ տեսակների ճակատին՝ կատարեալ արհամարհանքի և զզուանքի դրոշմը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Մայիսի 1-ին

Ամենաչատը մի ամիս ևս և մենք կունենանք ֆիլտրով անցկացրած և ապա 2 վերստ աւել տարածութեամբ գետնի տակ չարված կաւի խողովակների միջով հոսող մաքուր ջուր, խմելու համար։ Եւ դա չնորհով մի պարոնի, որը չընչին կարողութեան տէր գոլով, ձեռնարկել է մի բարի գործ, որի գլուխ բերելու համար ծախս է հարկաւոր ոչ պակաս քան 3000 բուբլի։ Պարոնին մօտ մարդիկ հաւատացնում են, որ այդ գումարը նրա ամբողջ կարողութեան 1/4 մասն է կազմում, և սակայն նա չէ խնայում իր սուղ միջոցներից մի քանի հազար զոհելու մի ամբողջ հասարակութեան մաքուր ջուր մատակարարելու համար։ Մեզանում հարիւրներով կարելի է մատնացոյց անել այնպիսի մարդկանց վրա, որոնք հարիւր անգամ աւելի հարստութիւն ունեն քան թէ յիշեալ մարդը, բայց սա նման չէ փողով կատարելապէս կուրացած «եսամոլ», «նիսիայ բարերարութիւն անող», «բարեգործների» և «ջերմեռանդ կրօնասէների» անուն կրող, խաչ և աւետարանով սուտ երդում ուտող կեղծաւորներին. ծառաների, մշակների, գործակատարների, մի խօսքով առանց բացառութեան բոլոր բանւորների վարձից կամ ռոճիկից մի մասը անպատճառ կտրելը փեշակ չինած և այդ միջոցներով հարստացածներին....

Խմելու համար մաքուր, լաւ և առողջարար ջուր ունենալու հարցը, որ կեանքի և մահու խնդիր է գանձակեցիների համար, քանի որ ապացուցված իրողութիւն է, որ մեր գետի ջուրը ապականվում է Ղարասուի ջրերով,—կրկնում ենք ջրի հարցը դեռ շատ վաղուց է, որ յուզում է մեզ։ Յայտնի տեղային «իլեարասի» վէրքը, որը համարեա ամեն մի գանձակեցու երեսի գարդն է կազմում, որով և ուստից լինելն իսկոյն ճանաչում, մի ցնդված, տգէտ ծերունի, Պարսկաստանի վիճակը խիստ աննախանձելի էր. երկիրը սարսափելի ճնշման և բռնաբարութեան ներքոյ, ֆինանսական դրութիւնը յուսահատական, անապահովութիւն, աւազակութիւններ և հարստահարութիւններ,—ահա թէ ինչ էր ամբողջ պետութեան կերպարանքը։ Գործերն այն վիճակի մէջ էին, որ հազար թուման ռոճիկ ունեցողը հազիւ կարողանում էր հարիւր թուման ստանալ։ Այդպիսի քայքայված բոպէում, Մահմէդ-շահը մեռնելով, 1848 թ. հոկտեմբ. 13-ին, Նասրէդդինը, որ իբրև գահաժառանգ ապրում էր Թաւրիզում, հրատարակվում է Շահ։ Այդ միջոցին նա 19 տարեկան էր, որովհետև ծնվել է 1829 թվին։ Նրա բարի աստղից Միրզա-Թաղի-խան Ամիր-Նիզամը, մինը այն երևելի պետական անձերից, որոնք երբեմն-երբեմն պատմութեան մէջ պատահում են, նրա դաստիարակն էր, ուստի երբ տարաւ իր սանիկին և հասցնելով Թէհրան հաստատեց գահի վրա, Միրզա-Թաղի խան, որ մի մեծ հայրենասէր, մշակված մտքի տէր և բարեկարգիչ էր, ազդեց երիտասարդ Շահի մտքի և ուղղութեան վրա և նրան վառեց բարեկարգիչ հանդիսանալու տենչանքով։ Այդ մեծ պաշտօնն ու դերը Շահը յանձնեց իրան Ամիր-Նիզամին կատարելու։ Վերջինս իր ջերմ ցանկութեան մէջ շուտով բարեկարգված տեսնելու երկիրը, շատ առաջ գնաց և կամեցաւ երկիրը կերպարանափոխել յանկարծ, շտապով։ Բայց հարիւրաւոր դարերով արմատացած առանցքութիւնները միայն յուսահատական և կատաղի կռւից յետոյ կարող էին տեղի տալ, ուստի հին դրութեան պաշտպանները կարողացան վարակել երիտասարդ թագաւորի միտքը և կասկածներ յարուցանել նրա սրտի մէջ և համոզել տալ, որ Ամիր-Նիզամը լոկ անձնական, շահասիրական և փառասիրական նկատումներով է գործում և այդ ամենն անում է ժողովրդականութիւն և սէր գրաւելու և ինքն բարձրանալու դահի վրա։ Կասկածը մինչև այն աստիճան սաստկացաւ, որ Շահը մի օր հրամայեց բաղնիքում Միրզա-Թաղի խանին արիւնաքամ անելու և մեծ բարեկարգիչը սպանվեց։ Վերջում երիտասարդ շահը համոզվելով այդ կասկածների անտեղի լինելու մասին, շատ փոշմանեց, շատ ափսոսաց և ողբաց իր հարազատ բարեկամի մահը։

Ամիր-Նիզամի մահով սկսված բարեկարգչական գործունէութիւնը թէև ընդհատվեց, բայց նրա ցանած սերմերը չը փչացան. Շահը ինքն սկսեց շարունակել հանդարտութեամբ, կամաց, այնպէս որ այժմ, երբ նրա գահակալութեան օրից անցել է 41 տարի, կարելի է մի ամփոփ դաղափար կազմել նրա բարեկարգութեան գործունէութեան հետևանքի և նշանակութեան մասին։

Ճշմարիտ է, Պարսկաստանը քաղաքակրթութեան շաւղի մէջ այնքան առաջադիմութիւն չէ գործել, որ այսօր ունենայ հաստատ և որոշ օրինքներ, օրինաւոր դատաստաններ և դատաւորներ, երկաթուղիներ. ճշմարիտ է, դեռ մինչև այսօր Պարսկաստանում չէ բացվել մի հատ համալսարան կամ դէթ մի հատ միջնակարգ կամ որ և է բարձրագոյն դպրոց եւրոպական տեսակէտով և ուղղութեամբ. ճշմարիտ է, որ դեռ այսօր մահմէտական հոգևորականութիւնը չարունակում է ահագին ազդեցութիւն ունենալ ժողովրդի վրա, բայց և այնպէս, եթէ համեմատենք ժամանակակից Իրանը Ֆաթալի-խանի և Մահմադ-շահի ժամանակի Իրանի հետ, Նասրէդդին-Շահը ամենայն իրաւունքով կարող է բարեկարգչի տիտղոսն ըստանալ, որովհետև նա բարեկարգութեան և քաղաքակրթութեան հիմն ձգել է։ Միայն Նասրէդդին-Շահի օրով Պարսկաստանը սկսել է ունենալ կանոնաւոր զօրք. Շահը բերել է տուել Եւրոպայից մեծ ռոճիկներով զինուորական մարդիկ, և այդ պատճառով, այսօր Պարսկաստանը մի կանոնաւոր զինուորական ոյժ ունի։ Երկրի ֆինանսական վիճակն այնքան բարւոքվել է, որ եկամուտը ծածկելով ծախսերը, դեռ տարեկան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐՍԻՑ ՇԱՀԸ ԵՒ ՆՐԱ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Մեր հարևան երկրի, Իրանի հրամանատարի ճանապարհորդութեան առիթով, մենք անօգուտ չենք համարում մի քանի ընդհանուր և կենսագրական տեղեկութիւններ հաղորդել թէ նոյն իսկ Շահի անձնաւորութեան և թէ նրա ճանապարհորդութեան գլխաւոր դէպքերի մասին, մանաւանդ որ ի մօտոյ և անձամբ մենք հետևել ենք այդ ուղևորութեան Թէհրանից մինչև Թիֆլիս։

Պարսկաստանի պատմութեան և Ղաճարների հարստութեան մէջ Նասրը-էդդին (օգնական հաւատի) Շահը մի առանձին նշանակութիւն և տեղ ունի։ Յայտնի է, որ նրա հօր Մահմէդ-շահի ժամանակ, երբ նրա վերին աստիճանի թուլութեան պատճառով երկրի կառավարութիւնը անցել էր Հաջի-Միրզա-Աղասու ձեռքը, որը սկզբում էջմիածնում Եփրեմ կաթողիկոսի ժամանակ մի հասարակ գրագիր է լինում, բայց յետոյ բախտի բերմունքով, Մահմուդ-շահի մեծ-վէզիրն է դառնում, մի ցնդված, տգէտ ծերունի, Պարսկաստանի վիճակը խիստ աննախանձելի էր. երկիրը սարսափելի ճնշման և բռնաբարութեան ներքոյ, ֆինանսական դրութիւնը յուսահատական, անապահովութիւն, աւազակութիւններ և հարստահարութիւններ,—ահա թէ ինչ էր ամբողջ պետութեան կերպարանքը։ Գործերն այն վիճակի մէջ էին, որ հազար թուման ռոճիկ ունեցողը հազիւ կարողանում էր հարիւր թուման ստանալ։ Այդպիսի քայքայված բոպէում, Մահմէդ-շահը մեռնելով, 1848 թ. հոկտեմբ. 13-ին, Նասրէդդինը, որ իբրև գահաժառանգ ապրում էր Թաւրիզում, հրատարակվում է Շահ։ Այդ միջոցին նա 19 տարեկան էր, որովհետև ծնվել է 1829 թվին։ Նրա բարի աստղից Միրզա-Թաղի-խան Ամիր-Նիզամը, մինը այն երևելի պետական անձերից, որոնք երբեմն-երբեմն պատմութեան մէջ պատահում են, նրա դաստիարակն էր, ուստի երբ տարաւ իր սանիկին և հասցնելով Թէհրան հաստատեց գահի վրա, Միրզա-Թաղի խան, որ մի մեծ հայրենասէր, մշակված մտքի տէր և բարեկարգիչ էր, ազդեց երիտասարդ Շահի մտքի և ուղղութեան վրա և նրան վառեց բարեկարգիչ հանդիսանալու տենչանքով։ Այդ մեծ պաշտօնն ու դերը Շահը յանձնեց իրան Ամիր-Նիզամին կատարելու։ Վերջինս իր ջերմ ցանկութեան մէջ շուտով բարեկարգված տեսնելու երկիրը, շատ առաջ գնաց և կամեցաւ երկիրը կերպարանափոխել յանկարծ, շտապով։ Բայց հարիւրաւոր դարերով արմատացած առանցքութիւնները միայն յուսահատական և կատաղի կռւից յետոյ կարող էին տեղի տալ, ուստի հին դրութեան պաշտպանները կարողացան վարակել երիտասարդ թագաւորի միտքը և կասկածներ յարուցանել նրա սրտի մէջ և համոզել տալ, որ Ամիր-Նիզամը լոկ անձնական, շահասիրական և փառասիրական նկատումներով է գործում և այդ ամենն անում է ժողովրդականութիւն և սէր գրաւելու և ինքն բարձրանալու դահի վրա։ Կասկածը մինչև այն աստիճան սաստկացաւ, որ Շահը մի օր հրամայեց բաղնիքում Միրզա-Թաղի խանին արիւնաքամ անելու և մեծ բարեկարգիչը սպանվեց։ Վերջում երիտասարդ շահը համոզվելով այդ կասկածների անտեղի լինելու մասին, շատ փոշմանեց, շատ ափսոսաց և ողբաց իր հարազատ բարեկամի մահը։

Ամիր-Նիզամի մահով սկսված բարեկարգչական գործունէութիւնը թէև ընդհատվեց, բայց նրա ցանած սերմերը չը փչացան. Շահը ինքն սկսեց շարունակել հանդարտութեամբ, կամաց, այնպէս որ այժմ, երբ նրա գահակալութեան օրից անցել է 41 տարի, կարելի է մի ամփոփ դաղափար

վում է,—այդ «իլեարասին» ոմանք վերագրում են մեր գետի ջրի վատութեան։ Այս այսպէս լինելով իսկ, ոչ ոք հոգացող չը կայ սարերից մաքուր և լաւ ջուր բերելու, որի համար, պէտք է ասել, մենք ունենք որոշ գումար։

70-ական թուականներում Կովկասի փոխարքայ, Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչ, գիտենալով քաղաքիս ջրերի վատութիւնը, կարգադրել է որ արքունի գանձարանից տասն տարվայ ընթացքում յատկացնվի Գանձակին 40,000 ռուբլի, սարերից քաղաքը լաւ և առողջարար ջուր բերելու համար։ Մի քանի տարի շարունակ այդ գումարի կարգադրութիւնը կատարվում էր իսկութեամբ, բայց դրամագլուխը հասնելով 32,000 ռուբլու, այդ տեղ էլ ընդհատվեց մնացորդի վճարումը։ Սկզբներում արագութեամբ աճող դրամագլուխը, որ մի օր պիտի ծառայէր իր բուն նպատակին, տարաբաղդաբար, վերջին տարիներում նոյն արագութեամբ նուազում է, ծառայելով «ի պէտս անհրաժեշտ կարեաց քաղաքիս»։ Եւ ինչ զարմանալու բան կայ, եթէ մեր հասարակութեան մեռելային անտարբերութեան պատճառով այն մեծաքանակ գումարի փշրանքներն են մնացել այսօր։

Տասնեակ տարիների ընթացքում քանի քանի անգամ ժողովներ են կազմվել սարերից ջուր բերելու համար, բայց մեր ոգէտ, եսամոլ, մեծախօս աղաները ժողովներում բացի անձնական հաշիւներ տեսնելուց և իրար անպատվելուց՝ ոչինչ չեն շինել... Մի կողէկ անգամ չաւելացնելով գանձարանից յատկացրած գումարի վրա, այդ մեծ մեծ խօսողները գեթ մի համաձայնութեան և եղբայրութեան չը հասան։ Ամեն մէկը նրանցից լաւ «ճարտարապետ», հմուտ «խիմիկ» և նուրբ ճաշակի տէր ճանաչելով իրան, աշխատում էր համոզել մեզ, որ այս ինչ աղբիւրի կամ գետի ջուրն է լաւը, առողջարարը և մաքուրը... Եւ այդպէս չարունակ ամբողջ տասնեակ տարիներ այդ մարդիկ ջուր բերելու հարցը իբրև ջուր ծեծեցին և մաղեցին և ի վերջոյ 84 թուականում ջրի հարցը ձգեցին քաղաքային արխիվը, ուր 60-ական թուականներից ի վեր փառաւորապէս և «անսասան» բազմած է ջրի չտեսարան չինելու գործը... մի գործ, որ անչուշտ յարութիւն պիտի առնէ մի օր, երբ սաստիկ երաշտութիւնից և գետի ջրի պակասութիւնից կը չորանան մեր հարստութեան և արդիւնաբերութեան միակ աղբիւրները—խառոոի առուները... Ջրի պակասութիւնը զգալի է հէնց ջրի առատ տարիներում, իսկ որովհետև այգիները տարուց տարի սունկի պէս են բանում, ուստի նոր այգիներ չինելը ջրի պակասութեան պատճառով խստիւ արգելված է դեռ ևս 70-ական թուականներում Կովկասի փոխարքայի հրամանով։ Օրինակներ արդէն եղել են և մեր ասածները երևակայական մտքեր չեն։ Գեանջու գետի ակնից սկսված 25—30 վերստ տարածութեամբ գետի աջ և ձախ ափերով ընկած լայնատարած անտառները սարսափելի և անողորմ կերպով փչացրել և չարունակ անկարգ և անկանոն կերպով փչացնում և կոտորում են տգէտ գիւղացիները։ Դրանք անտառի նշանակութիւնը չեն հասկանում։ Բաւական է որ անտառը առ այժմ առատօրէն ամեն տեսակ փայտեղէն է մատակարարում թէ տնային պետքերի և թէ գլխաւորապէս ծախսելու համար, չեն հասկանում որ իսկ անտառը փչանալով, տարուց տարի ցամաքել և ցամաքում են նրա միջից հոսող աղբիւրների ջրերը, որոնք թափվում էին գետի մէջ։

Սարերից ջուր բերելու խնդիրը 84 թուում արխիւը տալուց յետոյ արդէն անցնում է վեց տարի և այդ միջոցում մեզանից ոչ ոք չէ էլ հետաքրքրում իմանալու, թէ ինչ դրութեան մէջ է գործը.... իսկ այսուհետև, երբ մենք չուտով կունենանք խողովակներով անցկացրած մաքուր ջուր, շատ հաւանական է, որ այլ ևս ընդ միշտ մոռացութեան տրվի սարերից ջուր բերելու հարցը։ Արդէն բաւական պիտի համարվի, որ ամբողջ տարի խմելու համար մաքուր, պարզ ջուր կը մատակարարվի մեզ։ Բայց մթթէ գետի ճնաակար և ապականված ջուրը ֆիլտրով անցնելով և պարզվելով նաև, հեռացվում են նրա միջից ճնաակար բաղադրութիւնները։ Այդպիսի արուեստական միջոցներով մաքրված ջուրը երբէք չէ կորցնում իր յատկութիւնը, այլ այդ գործողութեամբ մի փոփոխութիւն է միայն առաջանում. այն է պղտոր ջուրը պարզվում է և ուրիշ ոչինչ։ Վատահանում ենք յիշեցնել մեր հասարակութեան ներկայացուցիչ դեպուտատ պ. Աշարեանցին, որ սարերից ջուր բերելու հարցը «արխիվի» խնդիր չէ; այլ գանձակեցիների համար կեանքի և մահու խնդիր լինելով, արդէն ժամանակ է ուշադրութեան առնել և պատշաճաւոր ընթացք տալ նրան։

Զ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մայիսի 4-ին պալատի հրապարակում, և առհասարակ մօտիկ փողոցներում կանգնած էր մի բազմութիւն, որի մի նշանաւոր մասը պարսիկներ և առհասարակ մահմետականներ էին։ Սպասում էին պարսից Շահի պալատից դուրս գալուն, որը այդ օրը պէտք է այցելէր մի քանի հիմնարկութիւններ։ Ժամը 1-ին Շահը դուրս եկաւ պալատից իշխան կառավարչապետի ուղեկցութեամբ. այդ միջոցին նրան բազմաթիւ խնդիրքներ ներկայացրին պալատի առաջ հաւաքված բազմաթիւ [illegible] գարսա պարսիկներ։ Շահը անձամբ ընդունեց այդ խնդիրքները։ Իշխան կառավարչապետի հետ բաց կառքի մէջ նստելով Շահը գնաց զինուորական դպրոցը, իր մինիստրների հետ միասին։ Այդտեղ նրան դիմաւորեցին դպրոցի կառավարիչը և դասատուները։ Աշակերտական նուագախումբը հնչեցրեց պարսից մարշը։ Այցելելով աշակերտներին, Շահը հարցրեց թէ քանի պարսիկ աշակերտ կայ դպրոցում, և թէ արդեօք այդտեղ աշակերտները առանց դաւանութեան խտրութեան են ընդունվում։ Յանկանալով աշակերտներին աջողութիւն, Շահը զընաց առաջին արական գիմնազիան, որը այդ առիթով բաւական զարդարված էր։ Այդտեղ Շահը լսեց գիմնազիայի ութերորդ դասատան մի պարսիկ աշակերտի ճառը, և շնորհակալութիւն յայտնելով անցաւ մի ուրիշ դահլիճ, որտեղ նրան ցոյց տուեցին աշակերտների նկարները։ Շահին ներկայացրին աշակերտական նկարներից մի ալբոմ։ Նոյն գիմնազիայում Շահը տեսաւ Թիֆլիսում գոյութիւն ունեցող տարրական մահմետական դպրոցի աշակերտներին, որոնց առաջադիմութեան մասին հարց և փորձ արեց։ Գիմնազիայում ևս աշակերտական նուագախումբը ածեց պարսից մարշը։ Այդտեղից Իրանի պետը գնաց Ս. Նունէի օրիորդական դպրոցը. երբ Շահը ներս մտաւ չքեղ դահլիճը, ուր կանգնած էին աշակերտուհիները՝ աշակերտական խումբը երգեց պարսից հիմնը ֆրանսերէն լեզուով։ Այդտեղ Շահին ներկայացրին ասեղնագործ բարձի վրա մի գեղեցիկ փունջ։ Ցանկանալով աշակերտուհիներին աջողութիւն պարսից Շահը իր ուղեկիցների հետ միասին գնաց Կովկասեան Մուզէյը, որտեղ բաւական երկար մնալուց յետոյ՝ դարձաւ պալատը։ Երեկոյեան ժամը $6^1/_2$-ին պալատում ի պատիւ Շահի ճաշ տրվեց, որին ներկայ էին 150 հոգի։ Երեկոյեան քաղաքային թատրոնում ի պատիւ Շահի մի ներկայացում տրվեց. խաղացողները ֆրանսիական օպերէտային խմբի անդամներն էին։ Ներկայացմանը ներկայ էր հրաւիրված հասարակութիւն, մեծ մասամբ զինուորական և քաղաքացիական պաշտօնեաներ։ Լօժաներում նստած էին բացառապէս կանայք։ Թատրոնը տանող փողոցը լուսաւորված էր։ Թատրոնը զարդարված էր։ Երէկ մայիսի 5-ին Շահի համար յատուկ լօժա էր շինված այսպէս կոչված «բալկոնի» գլխին, որը զարդարված էր չքեղ կերպով։ Շքեղ էր նոյնպէս և այդու լուսաւորութիւնը։ Այդու մէջ շինված էր մի գեղեցիկ վրան, ուր երկրորդ անտրակտին Շահը թէ զովացուցիչ խմիչքներ խմեց, և թէ դալիան քաշեց։ Շահի լօժայում նրա հետ միասին նստած էին իշխան կառավարչապետը, Պարսկաստանի մեծ վիզիրը Էմինուս-Սալթանէ, և Պետերբուրգից Շահին դիմաւորելու համար եկած գեներալ Պոպով։ Ներկայացումը սկսվեց Շահի գալստեան առիթով շարադրած մի մարշով։ Ապա խաղացին «Կարմիր արև», «Ցերեկ և գիշեր» և «Բօկկաչիո» օպերէտներից մի-մի գործողութիւն։ Երկրորդ գործողութիւնից յետոյ Շահը վերադարձաւ պալատը։ Երէկ մայիսի 5-ին, առաւօտեան Շահը դուրս գընաց Թիֆլիսից։ Նրան ճանապարհ դնելու համար պալատում հաւաքված էին քաղաքացիական և զինուորական բարձր պաշտօնեաները։ Գօլովինսկի պրոսպէկտի վրա կանգնած էին զինուորներ նուագախմբերով։ Առաջին գիմնազիայի և զինուորական դպրոցի մօտ կանգնած էին դրանց աշակերտները։ Շահը ուղեւորվեց Վլադասանի լեռների ճանապարհով դէպի Վլադիկավկաս։ Պարսկաստանի միապետի Թիֆլիսից դուրս գնալը յայտնվեցաւ թնդանօթների որոտով։

—

Մայիսի 5-ին, առաւօտեան $8^1/_2$ ժամին, Թիֆլիսի թեմի առաջնորդ Արիստակէս եպիսկոպոսը պալատում, առանձին ունկնդրութեան ընդունվեց Պարսից Շահի մօտ։ Սրբազան առաջնորդը թեմի կողմից շնորհաւորելով Պարսից միապետի Թիֆլիս գալը, և բարեմաղթութիւններ անելով, երախտագիտութիւն յայտնեց այն հովանաւորութեան համար, որ Շահը ցոյց է տալիս պարսկահայերին։ Շահը սիրալիր կերպով հարցնելով Արիստակէս եպիսկոպոսի առողջութիւնը՝ պատասխանեց որ ինքը պահպանել է և միշտ կը պահպանի իր հպատակ հայերին։

—

Լսում ենք, որ Պարսից Շահը ահագին քանակութեամբ պարսկական չքանչաններ է վերցրել իր հետ ճանապարհորդութեան ժամանակ բաժանելու համար։ «Արիւծի և Արեգակի» չքանչաններից շատերը ստացել են և Թիֆլիսում։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են, որ մայիսի 3-ին Վ. կաթողիկոսը վերադարձաւ Էջմիածին։

—

ՎԱՐԱԶԱԲՈՑՆԻ դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է մեզ տպագրել հետևեալը. «Յայտնում ենք շնորհակալութիւն պ. Ջումշուդ Սարուխանեանցին, որ Վարազաբոյնի ուսումնարանի չէնքի և կահ-կարասիների թերութիւնները լրացնելու համար՝ մեր ուղարկած սատարդրութեան ցուցակով 118 ռուբլի է ժողովել՝ Մերվից, Ասխաբադից, Ղզըլարվատից և Բագուից և ուղարկել է մեզ յիշեալ գումարը Շուշում բնակվող պ. Միրզա Տէր-Սարգսեանի միջոցով։ Փոքրի մի մասը ստացանք արդէն յարմարաւոր գրասեղան-նստարաններ չինել տալու համար, իսկ միւս մասը թողեցինք պ. Տէր-Սարգսեանցի մօտ մինչև հարկաւոր գործադրութիւն։ Մեր շնորհակալութիւնը յայտնում ենք և յարգելի նուիրատուներին»։

—

ԳՕՐԻՍԻՑ մեզ գրում են. «Թիֆլիսի ռուս «Новое Обозрѣніе» լրագրում տպված էր մի լուր, իբր թէ Մեղրիի տանուտէրը շատ անխղճմտօրէն է վարվում դպրոցապատկան և եկեղեցապատկան իրան յանձնված գումարի հետ, թէ իր բարեկամին է տուել շահեցնելու, թէ հաշիւ չէ տալիս և այլն։ Այդ լուրը արտատպվեց և ուրիշ լրագիրներում։ Այդ լուրը իսկոյն ուշադրութեան առնվեց։ Պ. գաւառապետը պաշտօնապէս յայտնեց պոլիցիական պրիստավին այդ բանի իսկութիւնն իրան իմաց անելու, իսկ Մեղրիի հասարակութիւնը, շինական ժողով կազմելով, մի համաձայնագրով յայտնեց պ. պրիստաւին, թէ իրաւ է հասարակութիւնը քաջ տեղեակ լինելով տանուտէրի ազնուութեանը, նրան մի գումար էր յանձնել որպէս աւանդ, բայց նա երբէք անխղճմտօրէն չէ վերաբերվել դէպի այդ աննշան գումարը, այլ նա հարկաւոր դէպքում ճշգրտութեամբ հաշիւ է ներկայացրել, որի համար յայտնում են իրանց անկեղծ շնորհակալութիւնը, միանգամայն անտեղի և զրպարտութիւն համարելով լրագիրների մէջ այդ մասին լոյս տեսած լուրը»։

—

Այն 10 ռուբլին, որ ստացանք բժշկապետ պ. Գասպարեանցից յօգուտ Արղութեանցի չքաւոր ընտանեաց, հասցրինք իրան Արղութեանցին։ Խեղճ մարդը այժմ հիւանդ պառկած է և շատ ցանկալի կը լիներ, որ ուրիշներն էլ հետևէին

մի ահագին գումար ևս մտնում է գանձարան։ Առևտուրը թէ ներքին և թէ արտաքին զարկ է ստացել։ Ապահովութիւնը երկրի մէջ ծաղկած է։ Հարստահարութիւնները, ճնշումները զգալի կերպով նուազել են. քրիստոնեայ, մահմէտական հրապատակ մի աչքով են նկատվում և հայերը պարսիկների հետ միասին կոչվում են պետական ամեն տեսակ պաշտօնների, առանց ստիպված լինելու իրանց կրօնը փոխելու, ինչպէս առաջ էր։ Մահվան պատիժը համեմատաբար քչացել է և Նասրէդդին-Շահի ամբողջ քառասնամեայ թագաւորութեան ժամանակ հազիւ այնքան մարդ է գլխատվել, որքան առաջ մի տարում կը գլխատվէր։ Մի մեծ քանակութիւն երիտասարդների ուղարկվել են Եւրոպա կրթվելու և Նասրէդդին-Շահն առաջին թագաւորն է, որ ոտնակոխ անելով դարեր աւանդական արգելքը՝ վճռեց ճանապարհորդել Եւրոպա։ Առաջին ճանապարհորդութիւնն նա արաւ 1873 թ., երկրորդը 1878 թ. և այս երրորդ անգամն է, որ նա ճանապարհորդում է։

Այս անգամ Շահն ընտրեց իր սվիտայի համար այնպիսի անձանց, որոնք դեռ Եւրոպա չեն տեսել։ Նա անձամբ կազմեց իրան ընկերացող պաշտօնեաների ցուցակը։

Ահա այդ ցուցակը։

I. Մինիստրներ,—1) Միրզա-Ալի-Ասղէր-խան, մականունված Էմին-Սալթանէ (կը նշանակի մըտերիմ թագաւորի), մեծ վիզիր և մինիստր ներքին գործերի, 2) Միրզա-Ալի-խան Էմին-Դովլէ (մտերիմ տէրութեան), նախագահ պետական խորհրդի կամ Մէջլիսի Շուրայի, 3) Ալի-Գուլի-խան Մուխբիր-Դովլէ (տեղեկաբեր տէրութեան) մինիստր ժողովրդական լուսաւորութեան և հեռագիրների, կրթված և լեզուագէտ անձ, 4) Զընգանդիր-խան, Վէզիր-Սանայի (մինիստր գեղարուեստների) հայազգի, կրթված և լեզուագէտ անձ։

II. Պալատական պաշտօնեաներ, 5) Մուհամմէդ-Ալի-խան Էմին-Սալթանէ (մտերիմ պետութեան), աւագ սենեկապետ, 6) Իթիմադ-Սալթանէ (պատիւ պետութեան) մինիստր կնիքի և պոլիցիմէյստր, 7) Մէհտի-Գուլի-խան Ղաճար, Մէջիդ-Դովլէ (մեծագոյն թագաւորութեան) հոֆմէյստր, 8) Էմին-Խալվաթ (մտերիմ գաղտնարանի), քարտուղար Շահի, 9) մի հատ սենեկապետ, 10) բժշկապետ Թոլոզան, ֆրանսիացի, 11) երկու գէնէրալ-ադիւտանտ, 12) 4 գէնէրալ, 13) Մուխանդիս-Մամէլիք (գլխաւոր ինժենէր տէրութեան), 14) ութ կամէր-ինկէր, 15) 3 կամէր-պաժ։

Այստեղ պէտք է նկատենք, որ այդ տիտղոսներից և պաշտօնեներից մի մասը լոկ անուանական է, ինչպէս օրինակ գեղարուեստների մինիստրի, ժողովրդական լուսաւորութեան մինիստրի տիտղոսները։ Իսկապէս մինիստրական պաշտօնների մէջ հետևեալները միայն գոյութիւն ունեն Պարսկաստանում՝ ներքին, արտաքին գործերի մինիստրութիւն, հեռագիրների մինիստրութիւն, զինուորական մինիստրութիւն։

Ահա այդ մօտ 40 սվիտայի և իրան Շահի ճանապարհորդութեան համար Թէհրանից մինչև ռուսաց սահմանագլուխը՝ Ջուղա հարկաւոր եղաւ կազմել մի բանակ, որ բաղկացած էր 17—20,000 հոգուց, 10,000 ուղտ և ջորի գրաստից, 1,000 վրանից։ Այլապէս Պարսկաստանում ճանապարհորդել անկարելի է Շահի և աւազանոց համար։ Ամեն մի մեծաւոր, մինիստր ունի իր հետ ահագին բազմութիւն բարձր և ստորին ծառաների, վրաններ թւով 10—20. յետոյ Շահին ընկերանում էին և մի երկու գունդ զօրքի, թընդանօթներ երեք հատ, դահիճներ, դահճապետներ, ֆարրաշներ, զուլամներ և այլն։ Եթէ այդպիսի փառքով և պատւով չը ճանապարհորդէ թագաւորը, նրա հեղինակութիւնը կարող է վտանգվել ժողովրդի աչքում։ Ի հարկէ, այդպիսի մի մեծ բանակով չէ կարելի շուտ և արագ ճանապարհորդել. օրեկան հազիւ 30 վերստ կամ 4—5 աղաճ տեղ կարելի է գալ, այդ է պատճառը, որ Թէհրանից մինչև Թաւրիզ 700 վերստ տարածութիւնը 23 օրում եկան։

Մոռացայ ասել, որ սվիտայի մէջ մտցրած է և Էդիզ-Սուլթան (թագաւորի սիրելին) կոչված եօթնամեայ մանուկը, որ այսօր Նասրէդդին-Շահից յետոյ երկրորդ դերն է խաղում Պարսկաստանում։ Միայն նրա համար նշանակված էր եօթն սենեկապետ Եւրոպա հետը գնալու, մինչդեռ մեծ-վիզիրի համար նշանակված է միայն երկուսը։ Այդ մանուկը անբաժան է Շահից, որը մի առանձին սէր է տածում դէպի նա։

Այս ամբողջ բանակը իջևանելով ամեն օր մի տեղ, խփում էր վրանները, որոնց մէջ բարձրանում էր ծիրանեգոյն վրանը, որ յատուկ է միայն Շահին։ Ամեն տեղ երբ նկատէք կարմիր վրան, այդ կը նշանակէ թէ Շահն այդտեղ է։ Այդ բանակը կերակրվում է հետևեալ միջոցով, որ իբրև վաղուց գործադրված սովորութիւն, օրէնքի տեղ է անցել. այդ միջոցը սուրսաթն է, այսինքն ամեն օր, Շահի բանակի գնացող ճանապարհի վրա գտնված գիւղերը պարտաւոր են հայթայթել բանակին հերթով մի օրվայ պարէնը թէ մարդիկների և թէ գրաստների համար՝ հաց, գարի, յարդ, խոտ, փայտ, ձու, ոչխար, գառը, հաւ, վառեակ, կանաչեղէն և պտուղ (եթէ կայ)։ Անցնելով գիւղերից ևս հետաքրքրվեցայ իմանալ

բժշկապետ Գասպարեանցի օրինակին, օգնութիւն հասցնելով Արղութեանցին և նրա ընտանիքին։

—

Կ. Պոլսի «Արեւելք» լրագրի ապրիլի 18-ի համարում կարդում ենք հետեւեալը. «Իզմիրի երեւելի ազգայիններէն իբր տասն և հինգ անձինք նամակ մը ուղղելով առ պ. Ադամեան, խնդրած են մեծանուն արուեստագէտէն, որ իւր ի Փարիզ և ի Լոնտոն ուղեւորութեանն առթիւ Եգիպտոս գնացած ատեն, Իզմիր ալ հանդիպի և քանի մը ներկայացում տայ անդ»։ Այդ տողերը մեզ առիթ են տալիս կարծելու, որ պ. Ադամեանի հիւանդութիւնը, որի մասին մի քանի ժամանակ առաջ Պոլսից մեզ գրեցին, անցած պէտք է լինի։ Տարաբաղդաբար ուղղակի Կ. Պոլսից մենք տեղեկութիւն չունենք առ այժմ այդ մասին, որպէս զի կարողանայինք որոշակի ասել, թէ ինչ դրութեան մէջ է տաղանդաւոր դերասանի առողջութիւնը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԻՐԱՐԻ ՃԱՌԸ ՑՈՒՑԱՀԱՆԴԻՍԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

—

Ապրիլի 24-ին համաշխարհային ցուցահանդիսի բացման առիթով ֆրանսիական հանրապետութեան ղեկավարները՝ ցուցահանդիսի կենտրոնական շինութեան մէջ էին խմբված։ Երբ հանրապետութեան նախագահը մտաւ դահլիճը, օդը թնդաց կեցցէներով։ Ներկայ էին աւելի քան 1,500 հոգի քաղաքական և դիպլոմատիական գործիչներից։ Նախագահի մօտ, աջ և ձախ կողմից տեղաւորված էին ցուհահանդիսի կազմողները։ Երբ դահլիճի մէջ տիրապետեց լռութիւն, Տիրարը իբրև ցուցահանդիսի ղեկավար, մի ճառ ասեց, որի գլխաւոր կէտերը առաջ ենք բերում. «Ցուցահանդէս կազմելու միտքը,—ասեց նա,—բաւական երկիւղով ընդունվեց։ Ամենքը հարցնում էին միմեանց թէ արդեօք այդ ձեռնարկութեանը չի վնասի ժամանակի կարճատեւութիւնը, որը անցել է 1878 թւի ցուցահանդիսից յետոյ։ Կարելի է արդեօք անցեալից աւելի լաւ բան անել, և ինչ առանձին մի նշանաւոր բան կայ այցելողներին ցոյց տալու համար։ Արդեօք աշխատանքի զանազան մասերում այնպիսի առաջադիմութիւն է եղել, որ կարելի լինի ազատութեան արժանի նիւթեր հաւաքել...

«Այդ բոլոր հարցերը և դրանց հետ կապված երկիւղը շուտով անցաւ։ Հէնց որ պարլամենտը տուեց կառավարութեան խնդրած գումարը, ցուցահանդիսի կազմողները եռանդուն կերպով գործին կպան։ Ֆրանսիայի և արտասահմանի ամեն կողմերից սկսեցին հաւաքվել այնքան թւով գործարանատէրեր, երկրագործներ, արհեստաւորներ, արուեստագէտներ, որ անկարելի եղաւ բաւականութիւն տալ ամենքին, թէև այս տարվայ ցուցահանդիսի այժմեան տեղը $1/8$ աւելի մեծ է, քան 1878 թւին։ Թէև արդիւնքը աւելի շատ է, քան մենք սպասում էինք, բայց զարմանալու բան չէ այդ, որովհետև առաջադիմութիւնը չէ դանդաղեցնում իր գնացքը, նոր սերունդը անընդհատ կերպով լրացնում է իր կորած ոյժերը, գիտութիւնը,—մեր դարու այդ զօրեղ շարժիչը,—անդադար յաղթութիւններ է անում և աւելի խոր է թափանցում բնութեան մէջ. շոգին և էլեքտրականութիւնը յեղափոխութիւն գցեցին անտեսական կեանքի մէջ, և ով կարող է նախագուշակել այն հրաշալիքները և անսպասելի գիւտերը, որոնք պէտք է տրվեն մեզ ապագայում և մեր ապագայ սերունդներին գիտութեան կողմից։ Արդիւնաբերութեան, երկրագործութեան, և արհեստների մէջ ամեն տեղ յաղթող է հանդիսանում գիտութիւնը և աշխատանքը։

«Այդ տեսարանը ապացուցանում է, թէ որքան սխալվում են նրանք, որոնք կարծում են թէ Ֆրանսիան ամբողջապէս նուիրվել է ապարդիւն ագիտացիաների և կուսակցական կռիւների։ Ի հարկէ Ֆրանսիան սառնասրտութեամբ չէ կարող նայել հասարակական գործերի ընթացքի վրա, և փորձված լինելով պատմութիւնից ստացած դասերով, չի թողնի որ իրան խաբի մի որ և է արկածախնդիր, աւելի քան երբ և լինի Ֆրանսիան պաշտպանում է իր ազատութիւնը, որը մեծ զոհերով և փառքով ձեռք են բերել մեր հայրերը։ Ֆրանսիան ազատ է, ուզում է ազատ ապրել և չէ ուզում ենթարկվել ոչ օրի բռնութեան։ Սակայն ինչքան էլ Ֆրանսիան այդ հարցերով զբաղված լինի, նա միշտ կը մնայ այնպէս, ինչպէս որ նրան դարձրել են մեր նախահայրերը,—մեծ ազգ, ազնիւ և աշխատասէր։»

Ապա շնորհակալութիւն յայտնելով ցուցահանդիսի շինութեան մասնակցողներին և ցուցահանդիսին մասնակցող բոլոր էկսպոնենտներին և կառավարութիւններին, իր ճառը վերջացրեց հետեւեալ խօսքերով. «Ընդունենք ուրեմն մեր քաղաքը եկող բազմաթիւ օտարներին ուրախութեամբ և սիրով, ապացուցանենք որ Ֆրանսիան հիւրասէր և մեծահոգի է. ապացուցանենք որ Ֆրանսիան սիրում է բոլոր երկրների բանւորներին, և դրանց մէջ ոչ թէ նախանձոտ հակառակորդներ է տեսնում, այլ աշխատակիցներ, որոնք իր հետ միասին աշխատում են մարդկութեան բարօրութեան, երջանկութեան և խաղաղութեան համար։»

Տիրարին պատասխանեց Կարնո մի կարճ, բայց ոգեւորված ճառով, և ապա յայտարարեց ցուցահանդէսը պաշտօնապէս բացված։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ինչպէս երեւում է Վիէննայից եկած լուրերից, Կօբուրգեան պրինցը կրկին անգամ դիմել է Թիւրքաց սուլթանին, խնդրելով նրան, որ իրան թոյլ տրվի Կ. Պոլիս գնալ և տեսակցութիւն ունենալ Թիւրքաց պետի հետ։

—Գերմանիայում բանւորների շարժումը արագաքայլ կերպով առաջ է գնում։ Գործադուլ բանւորների թիւը տասնեակ հազարներով է համարվում։ Կառավարութիւնը կասկածում է հետեւանքներից։ Վիլհելմ կայսրի տուած բացատրութիւնները բանւորական պատգամաւորներին, ինչպէս երեւում է, կարական ազդեցութիւն չեն ունեցել բանւորների շարժման վրա։

—Փարիզից հեռագրում են, որ հաւանականաբար բարձրագոյն ատեանը կը վճռի գեներալ Բուլանժէին զինուորական-դաշտային դատարանի ենթարկել, որովհետև այնպիսի թղթեր են գտնված, որոնք Բուլանժէին անպայման յանցաւոր են դարձնում։ Ուրեմն արկածախնդիր գեներալը իզուր չէ փախել Լոնդոն, զգալով իր արածների պատասխանատուութեան դժուարութիւնը։

—Ինչպէս յայտնի է, վերջին ժամանակներում տեղի ունեցան կաթոլիկական մի քանի ժողովներ Վիէննայում, Լիսաբոնում և Մադրիդում։ Այժմ, ինչպէս հեռագրում են Հռոմից, մտադրութիւն կայ կաթոլիկական միջազգային ժողով գումարել նոյն իսկ Վատիկանում, ուրեմն պապի անմիջական մասնակցութեան և հսկողութեան ներքոյ։

—Պատասխանելով պատգամաւորների հարցապնդումներին, իտալական մինիստր կրիսպի յայտնեց, որ Աֆրիկայի արշաւանքի հարցի վերաբերմամբ մինիստրների մէջ տարաձայնութիւններ չը կան, ինչպէս այդ աշխատում են հաւատացնել պտտվող լուրերը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մայիսի։ Թագաժառանգ Ցեսարեւիչը իր ընակութիւնը տեղափոխեց Ցարսկոյէ-Սելօ, որտեղ կը շարունակէ իր զինուորական ծառայութիւնը գուսարների գնդի մէջ։—Անցեալ գիշեր վախճանվեց պետական խորհրդի անդամ Տանեեվ։

ԲԵԼԳՐԱԴ, 3 մայիսի։ Միտրոպոլիտ Միխայիլ համոզում է իր համակրողներին, որ իր առիթով հանդիսաւոր ցոյցեր չանեն, և առհասարակ դէմ է այն տեսակ ընդունելութեան, որը կուսակցական բնաւորութիւն է կրում, ըստ որում նա ցանկանում է կուսակցութիւններից դուրս լինել։

ԲԵՐԼԻՆ, 3 մայիսի։ Կայսրը ընդունելով այսօր հանքագործների պատգամաւորութիւնը, հարցրեց պատգամաւորներին, թէ ինչ է բանւորների պահանջը՝ որին պատգամաւորները պատասխանեցին, որ նրանք պնդում են ոչ այնքան վարձի չատացնելու վրա, որքան այն բանի վրա, որ հանքայրերում 8 ժամից աւելի չը մնան։ Կայսրը նկատեց, որ նա ուշադրութեամբ է վերաբերվում դէպի իր հպատակները, սակայն բանւորները պէտք է հասկանան, որ խախտված են եղել պայմանագրութիւնները, և որ աշխատել ցանկացողներին աշխատանքից հեռացնելը դատապարտելի գործ է։ Կայսրը յոյս ունի, որ բանւորները սոցիալ-դէմոկրատների հետ ոչինչ կապ չունեն և չեն էլ ունենայ, ապա թէ ոչ ինքը խիստ միջոցների կը դիմէ, առանց զիջողութիւն անելու։ Կայսրը իւրաքանչիւր սոցիալ-դէմոկրատին պետութեան և հայրենիքի թշնամի է համարում, և եթէ քննութեան ժամանակ կը յայտնվի, որ այդ շարժումը զարդարված սենեակները գեղինը ծածկված էր կարմիր մահուդով։ 150 օգակ ծառայում էին իրրև պատուաւոր պահնակ։ Այդտեղ Շահին ներկայացաւ Օրդուբաթի մահմէտական հոգևորականութիւնը։ Երեկոյեան փառաւոր հացկերոյթ և հրաւառութիւն կար։ Մեհեալ Ջուղան կենդանացել էր. հաւաքվել էր ահագին բազմութիւն շրջակայ գիւղերից։

Ապրիլի 30-ին, առաւօտեան Շահը դուրս գալով Ջուղայից, ճաշեց Նախիջևանում և երեկոյեան իջևանեց Բաշ-Նորաշէնում։ Ամեն տեղ պատրաստված էր շքեղ ընդունելութիւն, զօրքը ողջունում էր, երաժշտութիւնը նուագում էր, տները, փողոցները, զարդարված էին դրօշակներով և լուսաւորված։

Մայիսի 1-ին, երեկոյեան ժամը 6-ին, Շահը հասաւ Երևան, ուր ընդունելութիւնը ամենափառաւոր էր։ Երկրորդ օրը, առաւօտեան ժամը 8-ին, Շահին ներկայացաւ կաթողիկոսներին ի հնուց յատկացրած շքով Մակար վեհափառ կաթողիկոսը, սինոդական չորս եպիսկոպոսների հետ։ Հայրապետը հայերէն լեզուով մի երկար ճառ խօսեց, որը թուրքերէն լեզուով Շահին թարգմանեց մի թարգման։ Թագաւորը բարեհաճեց պատասխանել, որ շատ շնորհակալութիւն է յայտնում, որ նեղութիւն քաշելով կապված է եղել սոցիալ-դէմոկրատիական ձգտումների հետ, այն ժամանակ ինքը չի տատանվի և գործ կը դնի իր ամբողջ իշխանութիւնը, իսկ այդ իշխանութիւնը մեծ է։

ՎԻԷՆՆԱ, 3 մայիսի։ «Neue Freie Presse» լրագիրը ասում է, որ ռուսաց ահագին կօնվէրսիաները իրագործված են համարեա թէ առասպելական արագութեամբ։

ԼՕՆԴՕՆ, 3 մայիսի։ Ռուսաց նոր փոխառութիւնը վաճառվում է պրէմիայով միասին՝ մօտաւորապէս $1^3/_8\%$։

ՀՌՈՄ, 3 մայիսի։ Վերին Իտալիայի մի քանի տեղերում գիւղացիները յուզվել են և ոչնչացնում են մասնաւոր գոյքերը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 մայիսի։ Այսօր Պետերբուրգ հասաւ Մեծ Իշխան Պաւէլ Ալէքսանդրովիչ։

ԵՐԵՒԱՆ, 4 մայիսի։ Ամենայն հայոց Կաթողիկոսը Մակար I ընդունվեց պարսից Շահից հանդիսաւոր ունկընդրութեան։ Պատասխանելով Կաթողիկոսի խօսքերին, Շահը առանձին համակրութիւն արտայայտեց դէպի հայոց ազգը և դէպի Էջմիածնի աթոռը, շնորհակալութիւն յայտնեց Կաթողիկոսին այցելութեան համար և խոստացաւ վերադարձին այցելել Կաթողիկոսին Էջմիածնում։ Նոյն օրը Կաթողիկոսին ներկայացան պարսից բոլոր մինիստրները։

Կ. ՊՕԼԻՍ, 4 մայիսի։ Բ. Դուռը Սոֆիայից լուր է ստացել, որ Սերբիայում բոլգարական գաղթականները, համալսաւորական գործակալները կազմակերպում են մի քաղաքական ընկերութիւն, որի նպատակն է փոփոխութիւններ առաջ բերել Բոլգարիայում տիրապետող կարգերի մէջ։ Ընկերութիւնը դրամական մեծ միջոցներ ունի իր ձեռքի տակ, և ունի շատ ճիւղեր Բոլգարիայում։ Սերբական իշխանութիւնը այդ ընկերութեանը արգելք չէ ցոյց տալու։

ԲԵՐԼԻՆ, 4 մայիսի։ Կայսրը այսօր ունկընդրութեան ընդունելով բանւորներին աշխատանք տուողներին, ասեց. «դրականապէս խորհուրդ եմ տալիս հանքագործական ընկերութիւններին փոխադարձ և մեծ առընչութիւն պահպանել բանւորների հետ, և աշխատել, որ բանւորներին միջոց տրվի՝ յայտնելու իրանց ցանկութիւնը։ Ես շատ եմ գնահատում այն, որ ձեռք բերած առաջադիմութիւնը աջողութեամբ հասցնվի մինչև վերջը և որ ընկերութիւնները երբէք իրանց մտքից չը հանեն, որ նրանք պարտաւոր են պետութեան առաջ հոգալու բանւորների բարեկեցութեան համար և խուսափելու այն բոլորից, ինչ որ կարող է ազգաբնակութիւնը դժուար կացութեան մէջ դնել։»

ՀԵԼՍԷՆԿԻՐԽԷՆ, 4 մայիսի։ Այստեղի չէջանի բոլոր բաժինների բանւորական պատգամաւորների ժողովում վճռված է, որ կիրակի օր բանւորական պատգամաւորների ժողովին ներկայացվի մի առաջարկութիւն, աշխատանքները վերականգնեցնելու մասին։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

օրեկան պարէնի քանակութիւնը։ Գիւղացիները յայտնեցին ինձ, որ ամեն օր նրանք հայթայթում են բանակին 3,000 ձու, 300 ոչխար և գառն, 2,000 հաւ, 50 խալվար հաց, գարի և յարդ, 200 խալվար փայտ։ Թէև օրէնքով (չէրիաթով) սուրսաթը պէտք է դուրս գալ հարկի հաշվից, բայց կառավարիչները չեն կատարում այդ օրէնքը և սուրսաթը գիւղացիների գրպանից է դուրս գալիս։ Այս տեսակ ճանապարհորդում է բանակը ժողովրդի հաշվով։ Բացի դրանից սովորութիւն է, որ Շահն իւրաքանչիւր գաւառից կամ քաղաքից անցնելիս, այդտեղի կառավարիչը կամ նահանգապետը պէտք է իրրև «մատաղացու» մի գումար ընծայեն Շահին։ Այդ պատճառով Ղազվինում, Զանջանում, Թաւրիզում, Ջուլֆայում Շահը ստացաւ ընծաներ կառավարիչների և ցեղապետների կողմից. օրինակ Ատրպատականի ընդհանուր կառավարիչ Ամիր-Նէզամը հրաւիրելով ճաշի Շահին, ճաշից յետոյ սկսեցին տեղների մէջ ներկայացրեց ընծայ 1,500 թուման փող և երկու լաւ քիշմիրի շալ։ Մաքուի-Թէյմուրխանը ընծայեց 15,000 թուման և 200 ոչխար։

Ամեն տեղ քաղաքներում փառաւոր ընդունելութիւն էր գտնում Իրանի հրամանատարը. մանաւանդ շքեղ էր մուտքը Թաւրիզ։ Ամեն օր դուրս գալու ժամը որոշում էր գլխաւոր աստղագէտը, կամ մունէջիմ-բաշին, որը խորհրդակցելով աստղերի հետ յայտնում էր, թէ որ ժամը և բոպէն բախտաւորն է։

Շահը բանակով հասաւ Ջուլֆա և իջևանեց պարսից սահմանում ապրիլի 28-ին։ 29-ին նա անցաւ Նաւակով Արաքսը իր 40 հետևակների հետ, իսկ ահագին բանակը իր վրաններով, զբաստաններով, զօրքով, թնդանօթով վերադարձաւ Թէհրան։ Արաքսից անցնելու ժամանակ պարսից սահմանում որոտում էին թնդանօթները, իսկ ռուսաց սահմանում թնդում էր զինուորական երաժշտութիւնը։

Շահը հագված էր պարզ, գլխարկի վրա ունէր փոքր ջէգգան, կիսաթաղը, աղամանդներով զարդարված, իսկ ուսով ձգած ունէր յայտնի թանգագին սուրը, որ զարդարված է ամբողջապէս մեծ յակինթներով, զմրուխտներով, ադամանդներով և միլիօնների արժողութիւն ունի։

Շահի հետ միասին ոտք կոխեց ռուսաց հողի վրա և թագաժառանգ իշխան Մուզաֆէր-ուդդին միրզան, որը սակայն անմիջապէս վերադարձաւ։ Թագաւոր Կայսրի կողմից ողջունեցին Շահին գեներալ-ադիւտանտ Պոպով, կոմս Կէլլէր, իշխան կառավարչապետի կողմից—գեներալ Ֆրէզէ, իսկ նահանգապետ Շալիկով ներկայացրեց պատուաւոր տեղեկագիր։ Արաքսի եզրից մինչև կաթողիկոսը եկել է իրան տեսութեան Էջմիածնից, որ ինքն բարեկամական սերտ կապերով կապված էր նրա հանգուցեալ նախորդի հետ, որ ինչպէս իր նախնիքը, նոյնպէս և ինքն միշտ մի առանձին սէր և պաշտպանութիւն է ցոյց տուել և պիտի տայ հայ ազգին։ Ամբողջ տեսակցութիւնը տևեց մի քառորդ ժամ։ Այնուհետև Կաթողիկոսին առանձին ներկայացան Շահի մինիստրները։ Այդ օր Շահը գիշերեց Դիլիջանում և մայիսի 3-ին ճաշելով Ուղունթալայում, երեկոյեան ժամը 5-ին հասաւ Թիֆլիս, որտեղ եղած ընդունելութիւնը արդէն յայտնի է ընթերցողներին։

Պարսից Շահը պէտք է այցելէ Պետերբուրգ, որտեղ պիտի մնայ հինգ օր. այդտեղից պէտք է անցնի Բերլին, Վիէննա, այցելելու է Փարիզի ցուցահանդէսը, և այդտեղ պէտք է մնայ 20 օր։ Փարիզից պէտք է գնայ Լոնդոն, ուր մնալու է նոյնպէս 20 օր։ Շահը մօտ մի ամիս պէտք է մընայ Շվեյցարիայում, և ապա Կ. Պոլիս պիտի գայ։ Նա պիտի այցելէ Սերբիա, և ապա անցնելով Բոլգարիայով և Ռումինիայով, պիտի մտնէ հարաւային Ռուսաստան, և անցնելով Թիֆլիսից, Բաղուի վրայով, պէտք է մտնի Պարսկաստան։

Հ. Առաքելեան

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ *և* ԲԱԹՈՒՄԻ *մէջ և փոխադարձ*

Հինգշաբթի, մայիսի 11-*ին,* ԱՐՄԷՆԻԱ (ARMÉNIE) *շոգենաւը, նաւապետ* ԳԱՐԻԳ (GARRIGUES) *դուրս կը գնայ* Բաթումից *դէպի* Տրապիզոն, Սամսօն, Կ. Պոլիս *և* Մարսէյլ։ Տեղեկութիւնների *մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին.* Բաթումում Լէմլոյլուի *տան,* Նարերէժնայա, *և* Թիֆլիսում Նախկին Աբծրունի *գալերէում,* № 114. 2—2 (2.)

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

տեղեկացնում է Թիֆլիսում գտնված անշարժ կալուածների պ.պ. տէրերին, որ ներկայ 1889 *թուականի մինչև ապրիլի* 15-*ը վարչութեան մէջ կազմված է հարկաբաժան տեղեկագիր անշարժ կալուածները ենթարկելու վերաբերութեամբ այն հարկին, որը որոշված է պետական խորհրդում համաձայն* 16 *յունիսի* 1887 *թուականի բարձրագոյն հաստատութեան։* 1888 *և* 1889 *թուականի համար հաստատված հարկագումարն է տարեկան* 46618 *բուբլի* 26 *կոպ.* *) *իսկ այդ հարկերը ժողովելու համար լինելի ծախքերի քանակութիւնը, քաղաքային դումայի* 1888 *թուի հոկտեմբերի* 17-*ի վճռի համաձայն որոշված է* 4600 *բուբլի. այդ ծախսերը նոյնպէս ընկնում են կալուածատէրերի հաշուին, համաձայն անշարժ կայքերը հարկի ենթարկելու համար կազմված կանոնադրութեան* 13 *յօդուածի ծանօթութեան։*

1889 *թուի հարկաբաժան տեղեկագրի մէջ մտցրած Թիֆլիսի անշարժ կայքերի արժողութիւնը, գնահատութեան ճիշտ հիման վրա, որոշված է* 32,721,335 *բուբլի. հետևաբար հարկահանութեան հասանելի քանակութիւնը կը լինի հետևեալը։*

Գնահատական գումար	Հասանելի հարկ	Հարկ հաւաքելու ծախսերը	Գումար
Բուբլի	Բուբլի կ.	Բուբլի կ.	Բուբլի կ.
100,000	142 46	14 06	156 52
75,000	106 84	10 54	117 38
50,000	71 23	7 03	78 26
30,000	42 74	4 22	46 96
15,000	21 37	2 11	23 48
10,000	14 25	1 41	15 66
8,000	11 40	1 12	12 52
6,000	8 55	— 84	9 39
4,000	5 70	— 56	6 26
2,000	2 85	— 28	3 13
1,000	1 42	— 14	1 56
900	1 28	— 13	1 41
700	1 —	— 10	1 10
500	— 71	— 07	— 78
300	— 43	— 04	— 47
100	— 14	— 01	— 15
80	— 11	— 01	— 12
50	— 07	— 01	— 08
40	— 06	— 01	— 07
30	— 04	— —	— 04
10	— 01	— —	— 01
5	— 01	— —	— 01

Օրինակ. Այս կերպով, 8745 *բուբլի գնահատական գումարից հարկ պէտք է վերցվի*—12 *բ.* 47 *կ.* (8000-*ից*—11 *բ.* 40 *կ.,* 700-*ից*—1 *բ.,* 40-*ից*—6 *կոպ. և* 5 *բուբլուց*—1 *կոպ. ընդամենը* 12 *բուբ.* 47 *կոպ.*) *և հարկ հաւաքելու ծախսերի համար*—1 *բուբլի* 23 *կոպ.* (1 *բ.* 12 *կ.*+10 *կ.*+1), 56,335 *բուբլուց*—80 *բ.* 26 *կ. հարկ.* (71 *բ.* 23 *կ.*+8 *բ.* 55 *կ.*+43 *կ.*+4 *կ.*+1 *կ.*) *և* 7 *բ.* 91 *կ.* (7 *բ.* 3 *կ.*+84 *կ.*+4 *կ.*) *հարկերը հաւաքելու ծախսերի համար, այսինքն* 1889 *թ. համար նոր որոշված հարկագումարը քաղաքային գնահատական տուրքի* 1/5-*ից փոքր աւելի։*

Հարկի ենթարկվելի անշարժ կայքերի կատեգորիաների վերաբերմամբ նոր հարկը հետևեալ էական զանազանութիւնն ունի քաղաքային գնահատական գումարից.

Ա) *Նոր սահմանած հարկին չեն ենթարկվում*

1) *Անեկամուտ, քաղաքի շրջակայքում գտնված հողերը, համաձայն քաղաքային դումայի* 17 *հոկտեմբերի* 1888 *թուի որոշման* **)։

2) *Սակաւագին կալուածները, որոնց վրա հարկ կընկնէր ոչ աւելի քան* 25 *կոպ., համաձայն քաղաքների, դղեակների և արուարձանների անշարժ կալուածների հարկերի վերաբերեալ կանոնադրութեան* 3-*րորդ յօդուածի* 3-*րորդ կէտին։*

3) *Կալուածները, որոնք պահպանվում են անմիջապէս պետական զանձարանի միջոցներով համաձայն կանոնադրութեան* 3-*րդ յօդուածի* 1 *կէտին։*

Բ) *Նոր հարկերին ենթարկված են*

1) *Երկաթուղու պատկանեալ կալուածները* 1889 *թուի հարկաբաժան տեղեկագրով գնահատված են* 799,300 *բուբլի հետևեալ կերպով.*

№ ըստ գլխագրքի	Կալուածների համառօտ որոշումը	Գնահատական գումարի	Հարկագումարի	Ազգաբնակչութեան վերաբերեալ	Ընդհանուր գումարը
		Բուբլի կ.	Բուբլի կ.	Բուբլի կ.	Բուբլի կ.
641	Երկաթուղու գիտարան (бутка) . . .	200 —	— 28	— 3	— 31
674	Կայարան	135,000 —	192 32	18 98	211 30
675	Մարդաբնակ տուն № 1	21,500 —	30 62	3 02	33 64
676	» » № 2	29,000 —	41 31	4 08	45 39
677	» » № 3	29,000 —	41 31	4 08	45 39
678	» » № 4	21,500 —	30 62	3 02	33 64
679	» » № 5	29,000 —	41 31	4 08	45 39
680	» » № 6	29,000 —	41 31	4 08	45 39
681	» » № 7	2,300 —	3 28	— 32	3 60
682	Հին ճանապարհորդների կայարան. . .	6,700 —	9 55	— 94	10 49
683	Մարդաբնակ տուն № 9	6,000 —	8 55	— 04	9 39
684	» » № 10	4,200 —	5 98	— 59	6 54
685	Վագոնների տունը (փայտից)	10,000 —	14 25	1 41	15 66
686	» » »	6,400 —	9 12	— 90	10 02
687	Զինուորական պիտոյքների համար տուն .	5,000 —	7 12	— 70	7 82
688	Փայտէ տուն (հրաշէջ մեքենաների համար).	600 —	— 85	— 08	— 93
689	Պահեստներ.	27,400 —	39 03	3 85	42 88
690	Քարէ պահեստներ	20,000 —	28 49	2 81	31 30
691	Քարէ շինութիւն (գլխ. չտեմար. բաժին.)	3,600 —	5 12	— 50	5 62
692	Փայտէ ծածկ	1,200 —	1 70	— 17	1 87
693	Գլխաւոր չտեմարան	53,000 —	75 50	7 45	82 95
694	Գործարաններ	188,000 —	267 83	26 43	294 26
695	Շոգեկառքերի շինութիւնը	79,000 —	112 54	11 11	123 65
696	Ջրամբարի շինութիւնը	5,000 —	7 12	— 70	7 82
697	Հին ջրամբարի շինութիւնը	3,000 —	4 27	— 42	4 69
698	Նաւթի ամբարը.	5,500 —	7 83	— 77	8 60
699	Նաւթաբաժան շինութիւնը	900 —	1 28	— 13	1 41
700	Նաւթաբաժան ամբարը	2,300 —	3 28	— 32	3 60
701	Հիւանդանոցի բաժինները.	75,000 —	106 84	10 54	117 38
	Ընդամենը . . .	799,300 —	1,138 61	112 35	1,250 96

2) *Թիֆլիս քաղաքին պատկանող կալուածները*

Աւելի մանրամասն տեղեկութիւններ կարելի է ստանալ քաղաքային վարչութեան մէջ *), *որտեղ այս յայտարարութիւնը* „Кавказъ" *լրագրում տպագրված օրից սկսած մինչև մի ամիս ընդունվելու են անշարժ կալուածատէրերից դիտողութիւններ հարկերի բաժանման մասին։*

Ցունիսին քաղաքային վարչութիւնը կը ներկայացնէ հարկաբաժան տեղեկագիրը քաղաքային դումային, բոլոր ստացված դիտողութիւններով և նրանց վերաբերեալ եղած բացատրութիւններով։

Երբ դուման վերջնականապէս կը հաստատէ հարկի բաժանումը, վարչութիւնն անմիջապէս կը սկսէ ուղարկել անշարժ կայքերի տէրերին հարկային թերթեր, որոնց մէջ նշանակված կը լինի իւրաքանչիւր կալուածի համար վերջնականապէս վճռված հարկը։

*) *Կալուածները աւելի շուտ ու հեշտութեամբ գտնելու համար, այն անձինք, որոնք դիմում են տեղեկութիւնների, թող բարեհաճեն ներկայացնել քաղաքային գնահատական հարկի վճարման իրանց անդորրագիրը։*

*) 1888 *թուականի հարկագումարը յետաձգելու համար քաղաքային դուման խնդրամատոյց է եղել։ Նայելով այն ժամանակամիջոցին, որքանով որ թոյլ տրուած կը լինի յետաձգել յիշեալ հարկագումարը իւրաքանչիւր կալուածքի վերաբերեալ վճարումներին պէտք է վերադրուի համապատասխան մասը։*

**) *Համաձայն Թիֆլիսի դումայի* 1889 *թուի յունվարի* 16-*ի որոշման, այն գիծը, որը բաժանում է քաղաքի կենտրոնական մասը իր դրսի մասերից, ունի հետևեալ ուղղութիւնը.*

Ա) *Կուր գետի աջ կողմից*

Գիծն անցնում է Մնացականեան կամուրջից, Վօրոնցօվսկի, Սումբատօվսկի, Բաղնիքների փողոցով, բաղնիքների դարբասով (Բաննայա վօրոտա), Կրասիլնի, Ստարօ-պօլիցեյսկի, Մալօ-Պետերբուրգսկի, Մեծ-Պետերբուրգսկի, Բէբուտօվսկի, Սադօվի փողոցներով և Սադօվի նեղուցով, Կոնսուլսկի և Գուդովիչ փողոցների մասով, յետոյ Կուսիկովի կալուածի, մանկանց ապաստարանի և Ս. Նունէի ուսումնարանի եռանով, 4-րդ Նագօրնի փողոցով, Նէպրօէդնի փողոցով, Դավիդօվսկի փողոցի մասով, առաջին Նագօրնի փողոցով, երկրորդ Նագօրնի փողոցով, № 2 անցքով, № 17 անցքով, յետոյ սկսած Լաբօրատօրնի ալբօդայի վերջից ուղիղ գծով դէպի 1 և 2 Նագօրնի փողոցները (Վերայում), Նագօրնի փողոցով մինչև Կիրպիչնի և այստեղից նոյն իսկ Նորագիծ (Ново-проэктированная) *փողոցով մինչև հայոց գերեզմանատունը, յետոյ գերեզմանատան խողովակով մինչև Վարազիս-խէվի, Վարազիս-խէվով մինչև Վերայի գետակը և վերջապէս Վերայի գետակով մինչև Կուր գետի մէջ նրա թափվելու տեղը։*

Բ) *Կուր գետի ձախ կողմից*

Դիզուբէի արքունի հողերի և իշխան Ամատունու նոյն տեղի հողերի միջին սահմանը, մինչև այն շերտը, որտեղ յատկացրած է հողը Անդրիովկասեան երկաթուղու գծին, արևմտեան կողմից, յետոյ գիծը շարունակվում է այդ ճանապարհին յատկացրած հողի շերտով բազուի ուղղութեամբ մինչև Ս. Անտոնի փողոց (Հալաբարում), Ս. Անտոնի փողոցով մինչև նրա ընդհատվելը Հալաբարի ձորով և յետոյ այդ ձորով մինչև Կուր գետը։

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ *և* ԲԱԹՈՒՄԻ *մէջ և փոխադարձ*

Ուրբաթ, 12/24 *մայիսի* ԲԱԹՈՒՄԻՑ *դուրս կը գնայ շոգենաւ* ALPHEE (ԱԼՖԷ) *նաւապետ* BAYLUS (ԲԱՅԼԻՒՍ), *մանելով* Կ. Պոլիս, Պօրտ-Լահօս *և* Լակավալ։

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ *պ.* Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, *իսկ* ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆ ՀԵԶՈՒԲԵԱՆՑ։ 2—2

Недавно пріѣхалъ въ Тифлисъ

ДАНТИСТЪ ВАЛЛАКЪ

АМЕРИКАНЕЦЪ

Докторъ зубной хирургіи Бальтиморскаго Зубоврачебнаго училища въ АМЕРИКѢ, членъ Французскаго Зубоврачебнаго общества въ ПАРИЖѢ и имѣющій дипломъ Дантиста изъ ДЕРПТСКАГО университета.

Принимаетъ больныхъ по зубнымъ болѣзнямъ ежедневно отъ 9 часовъ утра до 5 часовъ вечера у себя на квартирѣ, на СОЛОЛАКСКОЙ улицѣ, домъ протоіерея ОРБЕЛИ, № 16.

ՆՈՐԵՐՈՒՄՍ ՀԱՍԱՒ ԹԻՖԼԻՍ

ԱՄԵՐԻԿԱՑԻ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ՎԱԼԼԱԿ

Դոկտոր ատամնաբուժութեան Ամերիկայի ԲԱԼՏԻՄՈՐ *քաղաքի ատամնաբուժական դպրոցի, անդամ* ՓԱՐԻԶԻ *ատամնաբուժական ընկերութեան։ Պ. Վալլակ ունի ատամնաբոյժի դիպլոմ Դորպատի համալսարանից։*

Ընդունում է ատամների ցաւով հիւանդներին ամեն օր, առաւօտեան 9 *ժամից մինչև* 5 *ժամ կէսօրից յետոյ, իր բնակարանում, Սօլօլակի փողոցում, աւագ քահանայ Օրբէլիի տանը,* № 16 2—10 (2)

Дозволено цензурою, Тифлисъ 5 Мая 1889 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.